ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մայիսի 2023 թվական թիվ 114 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 4-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 2 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 5-րդ կետով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշմամբ, ՀՀ Վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի 1550-Լ որոշմամբ հաստատված /հավելված N10/ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի կանոնադրության 19-րդ կետի «19»-րդ ենթակետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի մայիսի 19-ի թիվ 255-Ա հրամանը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի հաստիքացուցակի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Տավուշի մարզպետի 2023 թվականի հունվարի 4-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2023 թվականի հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 2 որոշումը:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2023 թվականի մայիսի 12-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

30.05.2023

2023թ մայիսի 29
ք.Իջևան